Պարույր Սևակ

Անլռելի զանգակատուն

4

ՂՈՂԱՆՋ ՊԱՆԴԽՏԱԿԱՆ

Հայ դասատուներն իրենք են զգում,
Որ ջահել սանի առաջմղումից
Հոգնում կես ճամփին ու ետ են մնում:
Եվ Կոմիտասը Բեռլին է գնում:
Ու գերմանական քաղաքում խոժոռ
Ինչ-որ վանական՝
Աչքերը խոշոր,
Դեմքը՝ բանական,
Քայլքն՝ անբնական,
Պաղ անցորդների հայացքն է անվերջ վրան սևեռում,
Մինչ մոլեռանդի նայվածքը նրա՝
Որքան ներհայաց-նույնքան բևեռուն,
Չի մեխվում սրա կամ նրա վրա,
Այլ պեղում կարծես անծանոթ հեռուն:
Եվ կոշտ ու կոպիտ գերմաներենը
Շուրջ երեք տարի հարկադրաբար,
Ճկվում է անվերջ նրա բերանում,

Սակայն չի ջարդվում վերջնականապես.
Կարծես թե թողած լեզուն կենդանի,
Գրում-կարդում է նորից գրաբար՝
Ճեմարանական խելոք սանի պես:
Ի՛նչ աննենք. շատ էլ հոգ չէ, որ այդպես
Գերմաներենը նեղում է հային:
Կար այլ մի լեզու՝ համամարդկային,
Այդ լեզվով խոսող գերմաններ կային,
Ու չէր վերջանում նրանց գրույցը:
Կոտրելով բառի բարակ սառույցը
Ոչ իբրև օտար-սառն ու կեղծամիտ,
Այլ մեծ պապի պես՝ առանց կեղծամի,
Գալիս էր Բախը ու ծանրը նստում
Երգեհոնի դեմ, ֆիզհարմոնիայի
Ու բարի ժպտում մրահոն հային:
Եվ ալիքվում էր մի վսեմ մեսսա,
Ու Բախը կարծես ասում էր.
-«Տեսա՞ր»:
Անհուն սրբությամբ երկինք էր միտում
Մի հոգեսրբիչ հոյակապ խորալ,
Եվ ծերուկ Բախը ջահելին դիտում,
Հարցնում էր կարծես - և գրաբարով.
-«Իմա՞ստը դորա»:
Իսկ այնուհետև՝
Օրատորիա-ի նարեկանման ծփացող մի ծով
Լռիկ մեղմությամբ, աղոթքի ճիչով
Դիզվում էր դանդաղ, փլչում շատ արագ,
Մինչդեռ ականջում մոլեռանդ հայի
Օրատորիա-ի ծփանքի միջով,
Խեղդելով խորք ձայնն Օրատորիա-ի,

Իրենն էր հնչում՝
Մի նոր Պատարագ...
Ու մեկ էլ հանկարծ Մոցարտն էր գալիս,
Գեղեցիկ, ջահել, կայտառ ու խնդուն,
Եվ պաղ դահլիճում ծիծաղն էր թնդում:
Նա մերթ՝ բարեկիրթ մանկան պես՝ ուշիմ
Լսում էր հային, խփում էր ուսին,
Մերթ՝ հանպատրաստից երգ եղանակում,
Եվ մեկ էլ՝ խոսում համբույրից կույսի,
Սրա վեղարը ծաղրուծանակում,
Պատմում արկածներն իր և ուրիշի՝
Չափից ավելի անկեղծանալով:
Իսկ երբ տեսնում էր՝ իր կատակն է զուր,
Հուսահատորեն ձեռքը թափ տալիս,
Իբրև միջնարար՝ մի բերան հազում
Ու լրջանալով,
Անկեղծ ջանալով՝
Նորից էր ուզում հային համոզել,
Որ պետք է այսպե՛ս - ոչ այնպես խոսել:
Մեջտեղ էր գալիս ուրախ Ֆիգարոն,
Դահլիճում սարքում շքեղ հարսանիք,
Իսկ նրա մտքո՞ւմ...
Աղջիկ-պատանիք
Սարից իջնելով ելնում են տանիք,
Որ մեկ էլ տեսնեն, թե ինչպես Սարոն
Անուշի տեսքը հեռվից որսալով,
Մոռացած ադաթ, ընկեր ու աշխարհ՝
Գետնում է Մոսուն...
-Դուք ինձ չե՞ք լսում,
Այս է ճիշտը, հե՛ռ, այս է պետք, պարո՛ն:

Իսկ հեռ-պարոնը լսում էր ուշիմ,
Ձմեռ ու ամառ
Ուսանում համառ,
Բայց և կրկրնում.
-Ուրիշն՝ ուրիշին,
Ես ի՛մը, ի՛մը, ես ի՛մն եմ ուզում,
Ի՛մը, դուք հասկա՞ն...
Ու չէր ավարտում «հասկանում եք»-ը:
Իսկ երբ այս հսկան
Եվ կամ թե ուրիշ վիթխարու մեկը
Հայ վարդապետի հոգին էր հուզում
Եվ գերեվարած տանում իր հետքով՝
Երբ նա չեր գտնում փրկումի դեղ-ճար,
Նրա բերանից ձգվում էր «Խղճա»-ն.
Հայցում էր Բախի մեներգ-աղոթքով...
Ա՛խ, նրա հեռո՛ւ-հեռո՛ւ հայրենիք,
Լսո՞ւմ ես արդյոք մենակ ու մենիկ
Ջղջացող որդուդ: Մի՞թե չես զգում,
Որ հեռվից-հեռու անձայն գոռալով
Այդ քեզ է դիմում Բախի խորալով.
«Քեզնից հեռացա, բայց դարձա իսկույն»:
Ա՛խ, նրա հեռո՛ւ-հեռո՛ւ հայրենիք,
Այդ ինչպե՞ս, ինչպե՞ս դու դարձար կնիք
Եվ ինչո՞ւ դու հենց ընտրեցիր նրա՛ն
Ու դրոշմը քո, իբրև սուրբ խարան,
Դրեցիր վրան՝
Ասելով. «Ի՛մն ես,
Ո՛ւր էլ որ գնաս՝ իմ ճո՛րտը, ծառա՛ն,
Իմ մինուճարն ու հավատարի՛մն ես»:
Ա՛խ, նրա հեռո՛ւ-հեռո՛ւ հայրենիք...

Ժամեր շարունակ մենակ ու մենիկ,
Եվ համբերությամբ մի անհատնելի
Խեղդելով հոգու ներհակությունը՝
Պաղ ստեղներին հաղորդում էր նա
Իր ամենազգա ու ջերմ մատների
Սրսփումն այրող ու տաքությունը:
Նրա վեղարի թողած ստվերը
Ժամեր շարունակ անվերջ ընկնելով
Ֆիզհարմոնիայի սևափայլ ներկին՝
Մթագնում էր այն կրկին ու կրկին:
Գոթական ոճի գրադարանում
Նա, աղեղի պես, անշարժ կորանում
Եվ ամե՛ն ինչ էր շուրջը մոռանում:
Բայց ամեն անգամ իրիկնամուտին,
Երբ մոտենում էր գիշերը՝
Մթին,
Ինչպես փակեղը,
Եվ Վարդապետին
Փակեղի նման նեղություն տալիս,
Մի անկոչ հյուր էր մթան հետ գալիս,-
Ա՛խ, գալըս ո՛րն է,-
Կարոտից մարող կնոջ պես վազում,
Գոնե մի թեթև հարց էլ չէր տալիս,-
Հարց տալըս ո՛րն է,-
Ձևի համար էլ նույնիսկ չէր ասում,
Թե Վարդապետը ուզո՞ւմ է,-
Վազում
Եվ թևերն իր տաք՝
Մեկ-երեք-չորստակ՝
Փաթթում էր, պլլում պանդուխդի նրա կարեվեր սրտին:

Թո՛ղ նա վերստին
Կուսակըրոնի կոչմանն իր վայել,
Սրբորեն հաստատ իր տված ուխտին՝
Անկոչ սիրուհուն իրենից վաներ:
Թե դռնից հաներ՝
Պիտի երևար բաց լուսամուտին,
Լուսամուտի պես աչքերը փակեր՝
Հիմա էլ մտքի դուռը կթակեր.
-Ընդունիր տունըդ:
-Ո՞վ ես, անո՛ւնըդ...
-Սուտլիկի՛ս մի տես,
Դու ինձ լա՛վ գիտես:
-Ո՞վ ես, անո՛ւնըդ...
-Հայրենակարո՛տ...
Եվ Վարդապետի հայացքի դիմաց,
Նրա կարոտած աչքերին ի տես,
Ձգվում էր հանկարծ կածանը քարոտ.
Սարավանդակից գութանի խոփն էր հանկարծ պսպղում.
Թոնրի պռնկին, սև պուտուկի մեջ, ապուրն էր պաղում.
Ճակատին շարված բոլոր «արծաթի» ծափերի ներքո՝
Արմաղան մի հարս նախշուն կարպետին ձավար էր մաղում.
Իրենց մացառե ցանցառ բեղի տակ
Ծիծաղում էին քարափներն անտակ՝
Աղունակների ու կաքավների
Խտուտ հարուցող կրկրան ձայնից.
Բարակ գոլորշին, անուշ խնկի պես,
Ծփում էր այգում, ելնում հնձանից.
Հարթ կտուրներին ծփծփում էին
Աներեսորեն կանաչած խոտեր.
Ջահել ու բոբիկ կանացի ոտեր

Թփթփում էին
Ու տպում էին
Իրենց հետքերը աղուրի փոշում...
Հստակ էր այնպե՛ս ու շոշափելի՛,
Տեսնում էր կարծես և ոչ թե հիշում:
Եվ աչքերն էին բացվում-մշուշվում
Ինչ-որ մորմոքից, որ անուն չունի.
Թիկունքի վրա զգում էր կարծես
Վազքը երթևեկ ինչ-որ մրջյունի.
Ու դուռը զարկող կարոտ կոչվածը,-
Էլ ի՛նչ հրավեր,-
Սենյակ էր խուժում
Եվ անմոռացն էր վերհիշում.
-Կռո՛ւնկ...
Խաբրիկ մը չունի՞ս...

ՂՈՂԱՆՋ ԿՈՏՈՐԱԾԻ

Չէ՛, կռունկ չկա՛ր Բեռլին քաղաքի երկնքում մթար,
Որ վարագուրված հայոց աշխարհից գեթ խաբրիկ մը տար:
Բայց Գուտենբերգին ծնած աշխարհում՝
Սև կռունկների սև երամի պես՝
Սև տառերն էին լրագրերի էջերին թառում:
Եվ մի օր հանկարծ
(Ահավո՛ր վայրկյան)...
Եվ մի օր հանկարծ այդ տառերը սև՝
Քիչ առաջ հանգած
Ածուխներ ասես՝
Մատներն են այրում գրաշարների,
Ու տաք ոսպի պես

Ընթերցողների լեզուն են վառում:
Նորի՛ց ու նորի՛ց
Հայոց աշխարհում
Մինչ թոնիրները՝ արյունից մարում,
Խաղաղ ծխացող լուռ երդիկներին
Աքաղաղի տեղ բոցերն են պարում:
Եվ լեղապատառ մայրերը հայոց
Ջո՛ւր են մրմնջում աղոթքը կերկեր,
Համըր Տիրամոր նիհար ծնկներին
Իզո՛ւր են այդպես աղերսով փարում.
Եթե ունենար
Որևէ հնար՝
Խեղճ տիրամայրը իրեն կփրկեր,
Մինչդեռ քիչ հետո ինքն է դառնալու
Պիղծ հանաքների,
Կեռ դանակների
Եվ ա՛յն հրդեհի չար կրակին կեր,
Որ նորից հիմա
Մարդկային մսեր ու ոսկորներ է շան պես ճարակում:
Տարաբախտ երկրի
Եվ աստծուց թափուր երկնի արանքում,
Իբրև ամոթի ծանըր վարագույր,
Փռվում էր ծուխը,
Եվ ճենճահոտը օդի շերտերն էր այնպես վարակում,
Որ - անժամանա՛կ -
Կռունկներն անգամ թողին-չվեցին
Եվ ուր թևեցին՝
Ահ ու սարսափից լեզուն կապ ընկած
Հայ մանչուկների խմբերի նման՝
Կը՛վ-կը՛վ հա՛ կը՛վ-կը՛վ՝

Անվերջ կվվեցին,
Անլուր աշխարհին իմաց տվեցին,
Որ հայոց երկրի ձորերում անտակ,
Կիրճերում խորունկ...
Ա՛խ, էլ ի՛նչ Կռունկ,
Երբ հիմա վառման թոնիր էր դարձել
Թոնիրի երկիր Հայաստանն ինքը,
Ու թոնրին դրված սև խուփ էր կարծես
Հայոց երկինքը...
Եվ ո՞ւր է ինքը.
Այստե՛ղ՝ Բեռլինո՛ւմ,-
Սրամիտ բախտի ինչպիսի՛ հանաք,
Ճակատագրի ի՛նչ ծաղրուծանակ:
Է՛հ, հայի կյանքում ինչե՛ր չեն լինում.
Վաղուց է զրկվել նա զարմանալու կարողությունից:
... Երբ ռուս-տաճկական կռվում հերթական
Ռուսաց սվինը, թուրն ու բերդանկան
Անձնատուր արին ճամփին հանդիպող
Թուրքական բազում բերդ ու բերդակալ,-
Է՛լ գերմանացի,
Է՛լ ֆրանսացի,
Է՛լ անգլիացի՝
Յուրաքանչյուրը խփեց իր ծնկան,
Ու բոլորը մեկ ձեռ ու ոտ ընկան,
Սան-Ստեֆանո քաղաք գնացին՝
Այնտեղ գումարվող Վեհաժողովին,
Որ... Պետերբուրգը հաղթության դաշտից
Իր սպասածից քիչ բերք ժողովի:
Երկար նստեցին, ուշ-ուշ վեր կացան,
Դրսից ժպտալով՝ ներսից բարկացան,

Անգամ լռելով՝ իրար հասկացան,
Ու երբ, վերջապես, պիղատոսաբար
Մաքուր լվացած իրենց ձեռքերով
Հայկական հարցը մեջտեղ բերեցին,
Քանի տաք էր դեռ՝ մերթ վերցըրեցին,
Մերթ էլ վերստին ներքև դրեցին,
Եվ ամեն մեկը մատներն իր վառեց:
Բայց ամեն մեկը այնքա՛ն շատ ճառեց,
Մինչև որ հարցը բավական սառեց,-
Ու ցիների պես ընկնելով վրան՝
Կտուցով, ճանկով լա՛վ քրքըրեցին,
Առան-տվեցին, տվեցին-առան
Ու վերջում... հարսի լեցուն կոնքերով
Փեսայի աչքին լավամարդ դառան.
Այս ու այն կողմից միավորների զրոն քերեցին
Ու մնաց մի թիվ,
Որ էլ չի քամվի՝ ինչքան էլ քամես,
Ու մի թիվ մնաց... համեստից համեստ.
Մնաց 16 -
«Հայկական հողված» -
Հայկական հարցի բզկտված մարմնից
Ոչ թե մինչևիսկ դաշույնով հատված,
Այլ քաշքշոցո՛վ, այլ եղունգներո՛վ
Մի կերպ ծվատված...
Սակայն... աշխարհում ինչե՛ր չեն լինում:
Սակայն... աշխարհի ցմփոր տերերին դա էլ շատ թվաց:
Եվ ահա նրանք վերստին եկան Վեհաժողովի՝
Այս անգամ արդեն այս նույն Բեռլինում,
Հայկական հարցը - հուշաթելի պես - մատին փաթ տված:
Երկար վիճեցին, տվեցին-առան.

-Հայ պատվիրակը թող նստի դռանն...
Ամենքը մի-մի պողպատե կռան՝
Իջա՛ն մեր սալին.
-Վա՜յ տամ մեր հալին...
Մեր արյան դիմաց՝ ծախսեցին թանաք.
- Ա՜յ քեզ խաչապաշտ թրի հաղթանակ...
Աղվեսությանը խառնած շնություն,
Ներհակությանը՝ միաբանություն,
Մեր արցունքի դեմ մի կում ջուր տվին,
16-ն այսպես մի կերպ շուռ տվին:
Աչքդ լո՜ւյս լինի,
Դու օգտվեցի՜ր, թվաբանությո՛ւն.
Շուռ գալով՝
Ածեց քո 16-ը -
Դարձավ 61:
Իսկ մեր հա՞րցը, մե՞նք:
Իսկ Հարցը Հայոց քամվեց վերստին՝
Կարծես թե՝ թափված արյան համեմատ.
Մի թիզ էր եթե Սան-Ստեֆանոյում,
Բեռլինում արդեն նա դարձավ մի մատ:
Այո՛, այստեղ էր՝ այս նո՛ւյն Բեռլինում,
Որ բարեխընամ մի Վեհաժողով
Որոշում հանեց... հայ հողագուրկին
Չբավարարել վեց արշին հողով,
Այլ - ընդամե՛նը - չխենթացընել
Մահվան ու ջարդի մշտական դողով...
Քաղցած հավի պես, քուն թե արթմնի,
Հայն էլ ինքն իրեն տեսնում էր անվերջ
Ինքնավարության կորեկով լեցուն հսկա մարագում,
Ինքնավարություն, որ հիմա դարձավ... բարենորոգում:

Բարենորոգո՛ւմ...
Գլուխը քա՛րը.
Թո՛ղ լիներ թեկուզ բարենորոգում,
Բայց ոչ թե թղթին, ոչ թե թանաքով:
Բարենորոգո՛ւմ...
Եթե ամեն ինչ
Ջարդում ես քարով ու դագանակով,
Փրթում ես թրով ու կեռ դանակով,
Խուժանի խուժմամբ՝ ասես հանաքով,
Նաև լրջորեն՝ կարգին բանակով,-
Ի՞նչ ես նորոգում.
Իհարկե լա՛ցը,
Որ չի չորացել,
Եվ կոտորա՛ծը,
Որ չեն մոռացել...
Եթե անջրդի հող ես ոռոգում,
Ի՞նչ է, եթե ոչ բարենորոգում...
Եվ ահա Կարմիր սուլթանն իսկապես
Հայի... ջուր դարձած արյունի գետով
Հայոց անջրդի հողն էր ոռոգում,
Եվ այդ էր կոչվում բարենորոգում՝
Այս նույն Բեռլինի 61 կետով:
Եվ հիմա... դատարկ այս որոշման տակ,
Իբրև մի կնիք վավերացումի,
Կարմիր սուլթանը՝ պաղ թանաքի տեղ
Լավ թաթախելով մեր արյան մեջ տաք՝
Դնում էր վայրի մի կրունկ...
-Կռո՛ւնկ...
Ա՛խ, էլ ի՛նչԿռունկ, էլ ի՛նչ սև Կռունկ,
Սրտավեր պանդուխտ.

Որտե՞ղ ես տեսել երկինք հասցընող
Փրկարար սանդուղք.
Ո՞վ կրկշտանա՝
Հացի փոխարեն թե նրան տան թուղթ...
Սրտամե՛ռ պանդուխտ,
Էլ ինչ ես այդպես լալիս,
Ձայն տալիս
Կռո՛ւնկ հա Կռո՛ւնկ,
Ա՛խ, էլ ի՛նչ Կռունկ,
Թե ճռնչոցով դարպաս ու դրունք
Հայոց հույսի դեմ ուժգին փակվեցին,
Թե հայոց Ուխտի
Հոգնատանջ ուղտի
Երկու ծնկներն էլ երեքտակվեցին.
Նորից մոլեգնեց մահվան հարսանիք,
Եվ Պոլսից մինչև պատժված Սասուն՝
Հայոց աշխարհի ամե՛ն մի մասում
Անբան անասուն դառնալը թվաց մի մե՛ծ արժանիք.
Թող կթե՛ն, շորթե՛ն,
Միայն... չմորթե՛ն,
Միայն...

ՂՈՂԱՆՋ ՋԱՐԹՈՆՔԻ ԵՎ ԿԵՆՍԱՏՄԱՆ

Եվ խորհել, որ այդ նույն պահին,
Երբ թուրք սուլթանը այսպես վեհաշուք
Տոնում էր ծնունդն ու չմեռնելը հոբելյար Մահի,
Միևնույն պահին
Այդ նույն աշխարհում
Գարուն էր, գարո՛ւն:

Քարայծը նորից
Իր քարայծիկի դունչիկն էր լիզում կիրճում ու սարում՝
Լեզվի ծայրով էլ թույլ չդիպչելով բերնի ընձյուղին.
Արագիլն էլի
Ծեր խնձորենու, ծաղկե բոցի մեջ իր ոտն էր վառում՝
Վերցնում ու դնում միևնույն ճյուղին.
Իբրև կշտամբանք ուշացած մարդուն՝
Իր իսկ սեփական նախաձեռնությամբ լույս աշխարհ եկած
Մի ինքնագլուխ արևածաղիկ աչիկն էր թարթում
Հերվա բոստանից.
Գութանի խոփը ժանգից էր նեղվում,
Ինչպես որ մարդը՝ իր դեմքին կպած սարդի ոստայնից.
Բահն աղջկա պես ուզում էր փարվել
Ու հետո մարել կարոտած հողի կրքոտ հպումից.
Սամին ուզում էր անկրակ այրվել՝
Եզան մկանուտ վզի շփումից.
Լծացու բարդին գոհ չէր երևում սուր կացիններից.
Դեղձենիներից մարջան էր կաթում,
Շեփորուկներից՝ երկնքի կաթիլ,
Եվ ձյունի փաթիլ՝
Ակացիներից...
Գարուն է, գարո՛ւն...
Անցած աշնանը հարսնացածների մայրությունը սուրբ
Զարթնում է հանկարծ՝
Ծնվելիք մանկան
Թույլ քացիներից...
Շողերն են ընկել օրորոցի մեջ խաղացող մանկան
Հինգշահյան ձեռքի պարզված մատներին,
Ինչպես մոմերին բոցը բարակող...
Առվույտից թափուր հսկա մարագով

Պաղ ստվերների հսկա ամբոխն է դես ու դեն անում,
Լուռ հրմշտոցով իրար ոտ կոխում, ջարդում իրար կող.
Դուրս գալ են ուզում, բայց սիրտ չեն անում...
Անուն են ուզում, ծաղկունքն անանուն,
Ծաղկունք անվանի ուզում են նորից,
Քնքշանքով իրենց անունը լսել
Կույս աղջիկների շրթերից լուսե...
Գարուն է, գարո՛ւն:
Անփորձ ու անգետ մի ճուտ հիմարիկ
Փակ բողբոջների ստվերին ընկած՝
Երևի սիսեռ կամ ոսպ կարծելով՝
Կտցահարում է հա՛ կտցահարում...
Կիսով չոր ու թաց խաղաղ բակերում,
Կալատակերում,
Ուր ծիլ են տվել
Աշնան կալսումից հողում մնացած հատիկներն արդեն,
Աքաղաղն այնպես գոռոզ է քայլում
Անկիրք հավերի անփակ հարեմում՝
Աչքը շուռ տալով մեկ դես ու մեկ դեն,
Ասես երեկվա ասկյարը այսօր դարձել է սպա ...
Սարալանջերին, հարսների նման,
Կրքոտ պուտերը բռնել են նազպար՝
Հարսների նման մոռացած մի պահ,
Որ աշխարհում կա բիրտ առևանգիչ...
Մի տարի առաջ թուրք թնդանոթի երկաթե ճանկից
Վիրավոր վանքին
Սրբատաշ քարի պաղ վիրակապ է վերստին ճարում
Ձեռքը ճարտարի...
Նորից հաճարին
Սեփական խեժով

Թուրքի գնդակից տեղ-տեղ պատըռված կեղևն է կարում...
Գարուն է, գարո՛ւն,
Բայց մարդասպանին դա չի խանգարում:
Դա չի խանգարում,
Որ արյամբ հորդի հայկական առուն,
Որ դիակներից քարափն անհատակ
Իր պռունկներով գա հավասարվի...
Ա՛խ, եթե անգամ քարե սիրտ ճարվի՝
Մարդկային սրտում բա կրա՞կ կարվի...
Որտե՞ղ էք տեսել, որ թել-ասեղով
Կտըրված երակ վերստին կարվի...
Այս արհավիրքից, զուլումից այս չար
Դե, ե՛կ, տնավե՛ր, մի՛ խելագարվի...

ՂՈՂԱՆՋ ՋԱՐՄԱՆՔԻ

Բայց նա այս անգամ չխելագարվեց:
Ո՛չ, նրա միտքը դեռ չխանգարվեց,
Դեռ չխանգարվեց և այն ժամանակ,
Երբ նա Բեռլինից հայրենիք հասավ,
Եվ, իբրև կյանքի նոր ծաղրուծանակ,
Ապշած աչքերով այստեղ էլ տեսավ
Եթե ոչ արնոտ նույն ահն ու մահը,
Ապա երկվորյակ ախն ու վախը նույն,
Նույն լաց ու կոծը, հառաչն ու վայը:
Այստեղ էլ հայի ձեռքը ծոցումն էր,
Այստեղ էլ հայի սիրտը բոցումն էր,
Ու մոլորված էր գլխիկոր հայը:
Այստեղ էր արդեն ցար Նիկոլա՛յը...
Վաթսունմեկ թվի ձևափոխությամբ

Լոկ թղթի վրա ջնջված չարիքը
Եվ չնվազած նույն հին կարիքը՝
Ենթակա պարապ տեղափոխության,
Ձուկ դարձած՝ լողում - չէին խեղդըվում
Ճորտատիրության անփոփոխ ծովում,
Ու ծառանում էր հեղափոխության
Մակընթացային կանաչ ալիքը:
Եվ Նիկոլայի աչքը ոխակալ
Ամենուր ու միշտ
Եվ ամենքի մեջ,
Անգամ երազո՛ւմ,
Տեսնում էր անվերջ
Միայն «տեռորիստ», «հեղափոխական»,
Միայն «դավադիր», միայն «սոցիալիստ».
Թվում էր նրան կայսրությունն իր ողջ
Մի անծայրածիր ստեպ օձալից...
Եվ կայսերական բանտին ու բերդին
Բյուրավոր հայեր զոհվելու տարան,
Դեմքին դաղելով մի ահեղ խարան՝
«Հեղափոխական» և կամ «դավադիր»:
Քա՛րշ տվին տարան,
Որ այնտեղ մորթեն
Իբրև մատղացու գառներ ու հորթեր՝
Ի սեր Հիսուսի արդար հավատի.
Գառնուկներ անմեղ՝
Լոկ նրա՛ համար,
Որ միսն էր հարմար՝
Որ միսն էր համեղ՝
Ու եթե նաև հորթեր բազմամեղ՝
Լոկ ա՛յն հանցանքով պատժապարտելի,

Որ սին հույսերի քաղված բոստանում
Հորթուկի նման տրտինգ են տվել...
Այսպես է.
Որտեղ շատ են խոստանում,
Միշտ էլ այնքան են հետո խստանում,
Որ ձեռք են կտրում, ոչ միայն թևեր:
Եվ կամոք ցարի՝
Նրա ոխակալ
Համայն Կովկասի պատիժ-փոխարքան՝
Հավետ անմոռաց մե՛ր Գոլիցինը,
Երկու գլխանի արծիվը կրծքին
Այդ մոլի ցինը,
Փակում է հայոց դպրոցներն ամեն.
-Օվսա՛ննա... ամե՛ն:
Եվ խաչապաշտի անկշտում ձին էլ
Թուրքավարի է կամենում ծամել՝
Խոտ է որոնում... ջրված մարգերում.
-Օվսա՛ննա... ամե՛ն:
Հայոց դարավոր գիրն են արգելում,
Բռնագրավում վանքի հողերը.
Գանձերը չեղած,
Եղած փողերը,
Պեղում մառանը,
Շտեմարանը,
Որ մի անգամ էլ քամվածը քամեն:
-Օվսա՛ննա... ամե՛ն...
Փակել դպրո՛ցը, ուսումնարա՛նը...
Բայց ինչպե՞ս փակես մի ազգի լեզուն,
Մի ժողովրդի խոսուն բերանը:
Լեզուն կարող է սարսափից լալկվել

Կապ ընկնել ահից,
Բայց ոչ թե փակվել:
Արգելել գի՛րը,
Այրել գրքե՛րը...
Բայց ո՞նց արգելես կսկըծող սրտի,
Մղկըտող հոգու ժայթքուն երգերը:
Այսպես է.
Միշտ էլ երբ համն են հանում՝
Ուղիղ հակառակ բան են ստանում:
Եվ արդ՝ չուզելով և ակամայից՝
Ուխտյալ հայատյաց այդ Գոլիցինը
Մինչևիսկ արդեն ռուսացած հայից
Մոլի հայ սարքեց:
Կրկրնվեց հինը.-
Ուր հայերենը վաղուց էր մնջում՝
Հիմա հնչում էր,
Նույնիսկ մռընչում.
Ով հայ գրքի դեմ աչքերն էր փակում,
Արդ սովորում էր հայ գիրը
Թաքո՛ւն.
Ով ռոմանսով էր թրջում իր բուկը,
Բերան ողողում օտարի երգով,
Հիմա գրգըռիչ մի հպարտությամբ
Սեղան էր գցում հա՛յ երգի ձեռքով,
Հա՛յ երգով վարում իր գինարբուքը,
Հա՛յ նվագի տակ ուրախ պար գալիս,
Հա՛յ խաղով-տաղով երգում ու լալիս:
Հայ երգն էր հուզում,
Հայ խոսքն էր հոսում.
Հակառակությա՛ն ոգին էր խոսում,

Հակառակության այն զարմանալի՛,
Անիմանալի՛,
Արտառո՛ց ոգին,
Որ պարգևած է եթե ամենքին,
Ապա հայ հոգում այնքան է առատ,
Կարծես բաշխելիս բնավ չե՛ն նայել,
Իսկ թե նայել են՝ բա՛ն չեն խնայել,
Փռել են այնպե՛ս շռայլ ու առատ,
Որ չես հասկանում՝
Ազգային արա՞տ,
Թե՞ արժանիք է...
Այն է թերևըս,
Որ մեզ ջնջել է, բայց և պահպանել,
Որ մեզ սպանել,
Ծնել է նաև,
Ու որով գուցե ապրում տակավին
Եվ աշխարհումըս կոչվում ենք հայեր...
Ինչպես մարդկանց մեջ՝ անցողիկ կյանքում,
Այդպես պատմության ծանըր երկայնքում
Երևի նաև լինում են ցեղեր,
Երևի նաև ազգեր են եղել,
Որոնց վիթխարի մարմինը թեպետ
Գինու տկի չափ արյուն է տանում,
Բայց դա արյուն է, որ չի լերդանում.
Մի քերծվա՛ծք, մի վե՛րք,
Ու բանը բո՛ւրդ է.
Կողքը պատռված գինու տկի պես
Քամվում են իսկույն.
Եվ անհետանում,
Չքվում է ազգը կամ ժողովուրդը...

Իսկ մեր արյո՛ւնը...
Նա ջրի՛, ցեխի՛
Եվ մինչև անգամ գարշահոտ նեխի՛,
Ամե՛ն ինչի մեջ իսկույն լերդանում,
Փակում էր վերքի բացված բերանը:
Եվ այդ մակարդը, նույն այդ մերանը
Որդուն է անցել հորից ու մորից.
Եվ արյունաքամ,
Կիսամեռ անգամ,
Մենք քանի՛, քանի՛, մենք քանի՛ անգամ
Հոգեդարձի պես փրկվել ենք նորից...

ՂՈՂԱՆՋ ՀԵՐՈՍԱԿԱՆ

Ա՛խ, ի՛մ ժողովուրդ,
Ես դեռ չկայի՛,
Որ քեզ պես ես էլ քեզ հետ տոկայի՝
Ծալվելու պատրաստ մեջքդդ գրկելով:
Սակայն դու,
Որ քո պատմագրքերով
Մի ձիգ ցուցակ ես
Ու լեցուն ցանկ ես
Նահատակների՛,
Ջոհի՛,
Հսկայի՛,
Դու չես զգացել երբևէ կարիք
Նաև քաջերի,
Անբեկ աջերի,
Որ կրծքիդ վրա
Դարձել են զրահ,

Որ սուրբ են պահել պատիվդ ազգային
Իրենց պարզ կյանքով-մահով հսկայի:
Ա՛խ, ի՛մ ժողովուրդ,
Ես դեռ չկայի՛,
Բայց կտրիճ որդիք մի՞թե քիչ կային,
Որ - հողի՛ տակից - զենք էին պեղում
Եվ քո արյան դեմ սև արյուն հեղում:
Սասո՛ւնը...
Արդեն ո՞րերորդ անգամ
Նորից տեր դարձավ նոր Դավիթ մանկան,
Որ - ինչո՞ւ սակայն -
Կոչվեց... Անդրանիկ:
Ահեղ ջարդերի ճարակող բոցում
Ամեն սասունցի դարձավ Սասնա ծուռ,
Սասնա տուն դարձավ ամեն ընտանիք,
Սասնա դյուցազուն՝ թե՛ մեծ, թե պուճուր,
Որ - բավակա՛ն է -
Քառսունծամ կույսեր, հարսներ արմաղան
Օսմանցու համար էլ երկանք չաղա՛ն,
Որ - բավակա՛ն է...
Խանդութ խաթունի գովքի փոխարեն,
Սասնա զմբզմբան ջրերի նման,
Հնչեց սարերում, ճամփեքում ոլոր
Աջ ու ձախ հորդած
Երգը քաջորդաց
«Վայ զուլում-վայ»-ը մի պահ խեղդելով...
Կիլիկիո տունը՝
Անառ Զեյթունը,
Որ մեն ու մենակ,
Սակայն միակամ

Կռվել-հաղթել էր քառասուն անգամ,
Հիմա՝
Քառասունմե՛կերորդ անգամ,
Շեկ բուրվառի հետ
Սև վառոդ խնկեց,
Խաչը վերստին դրոշակ տնկեց,
Ճորտության գիրը կրկին հերքելով՝
«Սուր ու թուր, գնդակ ու հրացանը
Մեր խաղալիքն է» խրոխտ երգելով:
Միակուռ դարձավ, ինչ ցիրուցան էր:
Կամք-սիրտ-նպատակ
Իրար հոդվեցին:
Եվ մեր դարավոր թշնամու սրտում
Յուղոտ գնդակներ ճենճահոտվեցին:
Նրանց էր լսում մի ողջ Հայրենիք,
«Պատերազմիկ ենք,
Ոչ թե վայրենիք»:
Նրանց էր լսում թշնամին սաստված.
«Դուք ունեք սուլթան,
Մենք ունենք աստված»:
Նրանց ձայնի մեջ լսեցինք մեզ մենք.
«Մարդ կոտորելը
Սովրեցանք ձեզմե»...
Ու եկեղեցիք պահքի մեջ մտան՝
Սգավորվեցին
Ամբողջ չորս ամիս,
Քանզի քայլում էր Մաքառումն ինքը
Իբրև գինովցած մի Բարեկենդան:
Սուրբ սեղանների վարագույրները
Փակված մնացին

Ամբողջ չորս ամիս,
Քանզի բացվել էր Հերոսությունը,
Որպեսզի իր տաք
Կրունկների տակ
Ազատությունը ահարկու թնդա:
Հարսներ,
Աղջիկներ,
Մայրեր,
Մանուկներ
Մերկացան իրենց արդուզարդերից,
Հագան քուրձ,
Ինչպես հագնում են զրահ:
Եվ ամեն հայ սիրտ
Դարձավ մի սրահ,
Ուր վհատությունն էր հոգեվարում
«Կա՛մ-կա՛մ»-ի հատու հարվածների տակ,
Եվ Ազատության ոգին էր պարում
Որպես վրնջող մի խենթ հովատակ:
110000 զորքի հանդիման
Մարտնչում էին 6000 քաջեր:
Չմարդկայնացած թուրքի հանդիման
Մարդեղինացած մի ազգ էր խաչել
Իր բախտն իր վրա:
Եվ սո՛ւրը նրա,
Որ ամբողջ վե՛ց դար սնար էր դարձել
Մեր մանուկների օրոցքի համար,
Սուրբ մատյանների գրքածածկերից
Խենեշ ժպիտով կարել էր բարձեր
Իր հաստ-իգացող նստուկին հարմար,-
Եվ սուրը նրա

Դիպավ մեր խոփին,
Մեր թարթիչ-նետով զինավառ կոպին,
Մեր մամիկների ասեղին ճարտար,
Մեր մանուկների հայացքին արդար,
Մեր մանգաղների շեղբերին տոկուն,
Մեր թոնիրների խաչերկաթներին,-
Երբեք չմեռած հայկյան մեր ոգուն,
Որ ճառագայթող տասը մատներին
Չէր դրել հինա՝
Հոմանու նման,
Այլ քսել արյուն՝
Հովաննու նման,
Որ Հայտնության օրն ի վերջո հասնի,
Եվ ամեն մի ազգ արժանին տեսնի...
Իր վարդապետի մթին վեղարով
Թե ուզեր՝ գուցե և նա էր կարող
Հարկադիր մարտին միջամուխ լինել՝
Գոտեպնդումի խոսքերով զինել
Հուսահատվածին,
Քաջին մաքառող,
Որպես նո՛րօրյա մի Ղևոնդ երեց:
Սակայն պայքարի զոհասեղանին
Նա բոլորովին ուրի՛շ զենք դրեց:
Իր ժողովրդի
Երգահան որդին
Իր ե՛րգը բերեց
Քաջորդաց մարտին,
Իր «Լո-լո»-ն՝
Մի ջո՛կ,
Մի դասա՛կ,

Մի գո՛ւնդ,
Եվ կռվողների հոգին հանեց թունդ,
Մեկին տասն արեց
Եվ հարյուր՝ տասին,
Նա՝
Խրոխտ «Լո-լո»-ն լուռ Կոմիտասի:
Սիփանա սարը գոռ արձագանքեց՝
Խռպոտ Նեմրութից չափը խլելով.
-Սիփանա՛... լո՛-լո՛...
«Սուրբ Կարապետ»-ի զանգը զիլ զանգեց,
Ամեն մի զանգը՝ մի-մի... յո՛թ հոլով.
-Կտրիճնե՛ր, լո՛-լո՛...
Վարագա լեռը,
Շամիրամ-առուն
Նույն մեկ բայն էին անվերջ խոնարհում.
-Սուրը հագեցա՛վ...
Ներկված Եփրատը ափերին տալով.
Վանա ծովակը տրտում խնդալով՝
Իրար ձայն տվին.
-...Դրեցին պատյա՛ն...
Ո՛չ,
Չհագեցան սրերն, իհարկե,
Սակայն իսկապես դրվեցին պատյան,
Ու երազելով մի ահեղ ատյան՝
Հայ մաքառումը,
Կտո՛ր առ կտո՛ր,
Յուրաքանչյուրը՝ մի կարմիր հատոր,
Այս անգամ նորից չավարտվեց.
Հատվեց՝
Բացականչության ու կախման կետով...

Հայի արյունը նորից լերդացավ,
Ու վերքը դարձավ ապաքինելի:
Կսկիծ ու մրմուռ,
Ճմլող սրտացավ
Աչքերի խոսուն ապակիներին
Գրեցին, թե ե՛րբ ի չիք կդառնան...
Ձմեռը նորից գարուն է դառնում,
Ամառն է կրկին հետևում գարնան,
Ամառվա տեղը աշունն է բռնում,
Եվ նախ՝
Վախվորած, շվար ու մոլոր,
Ապա՝
Աննկատ և ակամայից
Ժպիտն է խաղում շուրթերին հայի.
Թևերն է ծալում ուժասպառ Լո-լո-ն,
Կոկորդն է ցամքում Վայ-աման-վայ-ի,
Նորից է հնչում ուրախ Նայ-նայ-ը:
Իսկ որտեղ երգը՝
Այնտեղ էլ նա է...